

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

2015- 2018 թ.

ՎԱՆԱՁՈՐ
2015

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Ամբիոնը դառնա հետազոտական կենտրոն, ընդգրկելով ուսանողներին, ձևավորելով նրանց քննադատական մտածողությունը, վերլուծական կարողությունները, տրամաբանական եզրահանգումները և ստեղծագործական կարողությունները, որը կտանի վերջիններիս հանրապետական աշխատաշուկայի պահանջարկների բավարարմանը և հետամուտ կլինի միջազգային և ազգային չափորոշիչներին համապատասխանող և մրցունակ կրթության որակի ապահովման կառույցի ստեղծմանը՝ իրականացնելու <Մոց. մանկավարժություն> և <Մանկ. և մեթոդիկա> մասնագիտությունները:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1. Ձևավորել ամբիոնի զարգացումն ապահովող հստակ համակարգ/մասնագետների վերապատրաստում/առկա, հեռակա/, գտնել ինքնակրթության ուղիներ/:
2. Աջակցել արհեստավարժ, սոցիալապես ինքնահաստատված քաղաքացու կայացմանը, որն ի զորու է ակտիվ մասնակցություն ունենալու Հայաստանի Հանրապետության զարգացման ռազմավարական խնդիրների լուծմանը, ժողովրդավարական հասարակարգի կայացմանը:
3. Բացահայտել և նպաստել մարդկային ներուժի զարգացմանը կրթության ասպարեզում՝ իրականացնելով կրթության տարբեր ոլորտների մասնագետների պատրաստում ու վերապատրաստում՝ գիտակցելով իր դերակատարությունը ՀՀ կրթական համակարգի բարեփոխումների գործընթացում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մանկավարժության ամբիոնի ներկա վիճակը

Պատմական ակնարկ: Մանկավարժության ամբիոնը ՎՊՀ-ի այն ամբիոններից է, որի ծնունդը համընկնում է ինստիտուտի ծննդյան տարեթվին (1969 թ.): Այն հիմնադրվել է ժամանակի հայտնի գիտնական-մանկավարժների եռանդի և ջանքերի շնորհիվ 1978թ. ամբիոնը տրոհվել է, ու նրան զուգահեռ բացվել է տարրական կրթության մանկավարժության և մեթոդիկայի ամբիոնը, որը ղեկավարել են Խաչատուր Արմենակի Աղաջանյանը (մ.գ.թ., պրոֆեսոր, 1978-83թթ.), Գարեգին

Երվանդի Ղույունյանը (մ.գ.թ., դոցենտ, 1983-2002թթ.): Նրանք մեծ ներդրում են ունեցել այդ ամբիոնի կայացման և զարգացման գործում:

2003 թվականին ամբիոնները նորից վերամիավորվեցին, և դարձավ մանկավարժության ամբիոն:

Ամբիոնում աշխատում է 14 դասախոս, որոնցից մեկը գիտությունների դոկտոր է, 14-ը՝ գիտությունների թեկնածու: Նրանցից 7-ը դոցենտ են:

Ամբիոնը սպասարկում է ինստիտուտի բոլոր ֆակուլտետների առկա և հեռակա բաժիններին:

Այսօր բուհում բացվել են նոր բաժիններ՝ նոր մասնագիտություններով: Ամբիոնի դասախոսների կողմից այս ընթացքում մշակվել են նոր դասընթացներ, որոնք համապատասխանում են բարձրագույն կրթությանը ներկայացվող ժամանակակից կրթական չափորոշիչներին: Ամբիոնում դասավանդվում է շուրջ 50 առարկա: Ամբիոնի դասախոսների գիտական հետազոտությունների շրջանակը բազմաբնույթ է և ընդգրկում է մանկավարժական գիտության տարբեր ոլորտներ:

Ամբիոնում ստեղծվել է 3 գիտական խումբ գիտահետազոտական աշխատանքները բարելավելու նպատակով:

Ամբիոնի դասախոսները պարբերաբար ղեկավարում են ՈւԳԸ-ի աշխատանքներ, որոնցից շատերը խրախուսվել են պատվոգրերով, ավարտական աշխատանքներ, որոնք միշտ էլ աչքի են ընկել իրենց գիտական բարձր մակարդակով: Ամբիոնը, որպես առաջատար կազմակերպություն, գրախոսում է դոկտորական և թեկնածուական ատենախոսություններ:

Մանկավարժության ամբիոնը սերտ կապեր ունի ԵՊՀ-ի մանկավարժության և ԵՊՄՀ-ի մանկավարժության ամբիոնների հետ:

Ամբիոնը համագործակցում է Վանաձորի և Լոռու մարզի դպրոցների հետ:

Ավանդական միջոցառումների շարքում կարևորվում են դպրոցի շրջանավարտների հետ կազմակերպվող հանդիպումները (ավագ դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը ուղղված միջոցառում, հուշ-երեկոներ, տարբեր թեմաներով ցերեկույթներ և այլն):

Իր գոյության 45 տարիների ընթացքում, մանկավարժական գործունեությանը զուգահեռ, ամբիոնում իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքն են մեթոդական ձեռնարկները, մենագրությունները, 500-ից ավել գիտական հոդվածները: Ամբիոնի դասախոսներն ակտիվորեն մասնակցել են համաինստիտուտային և հանրապետական տարբեր գիտաժողովների (ՎՊՄԻ-ի 35, Կ. Դ. Ուշինսկու 185, Ղ. Աղայանի 170, Ժ. Ժ. Ռուսսոյի 300 և Հովհ. Թումանյանի 145-ամյակներին նվիրված, ինչպես նաև Գյումրիում, Արցախում կազմակերպված):

Մանկավարժության ամբիոնում ակտիվորեն ընթանում է ներդրված համալսարանական ՄԿԾ-ների բարեփոխման գործընթացը: Ամբիոնի

գործունեությունը նպատակաուղղված է ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարող որակյալ կրթության ապահովմանը: Ներկայումս ամբիոնի գործունեության հիմնական ձեռքբերումը ուսուցման կրեդիտային համակարգի ներդրումն է բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերում, ինչը բխում է Բոլոնյան գործընթացի սկզբունքներից: Ուսումնական գործընթացի բարեփոխման շրջանակներում ձևավորվել է նոր նորմատիվային բազա (կրթական ծրագրեր, կանոնակարգեր, ընթացակարգեր, ուսանողների գիտելիքների գնահատման նոր համակարգ և այլն): Ամբիոնում մշտապես իրականացվում են աշխատանքներ ուսումնական գործընթացում նորարարական մեթոդների և ձևերի, կրթական ինտերակտիվ մեթոդների ներդրման ուղղություններով: Ամբիոնն իրականացում է «Դպրոց-բուհ-աշխատաշուկա» հետադարձ կապերի ապահովումը, զարգացում և ընդլայնում: Ամբիոնի ռազմավարությունը նպատակաուղղված է կրթական ծառայությունների մատուցման որակի համապատասխանեցմանը միջազգային չափորոշիչներին: Այս տեսլականով է ամբիոնը ծավալում իր գործունեությունը, որը միտված է կրթական գործընթացի բարեփոխմանը՝ համաձայն Բոլոնյան հռչակագրի սկզբունքների:

Հաշվի առնելով ՀՀ բարձրագույն կրթության համակարգի զարգացման միտումները, առկա խնդիրների լուծման անհրաժեշտությունը, ամբիոնի 2015-2018 թթ. զարգացման նպատակը և խնդիրներն են՝

1. կրթական նորագույն տեխնոլոգիաների զարգացում ու կատարելագործում
2. ամբիոնի կողմից մշակված կրթական ծրագրերի հավատարմագրման ապահովում
3. տեղեկատվական տեխնոլոգիաների դերի բարձրացումը և ուսումնամեթոդական հենքի կատարելագործում
4. կրթության որակի ապահովման ներքին համակարգի կատարելագործում՝ համաձայն արտաքին գնահատման սկզբունքների չափորոշիչների
5. կրթական գործունեության թափանցիկության ապահովում կրթական գործընթացում գործատուների ներգրավվածության ապահովման միջոցով
6. ուսանողների դաստիարակվածության, կրթվածության, արհեստավարժության դերի բարձրացում, նրանց կողմից համամարդկային արժեքների կարևորում
7. ուսանողների ընդհանուր քաղաքական, իրավական մշակույթի ձևավորում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

ՆպատակներՑուցանիշներ (միջոցառումներ) Պատասխանատու

Նպատակ	Խնդիր	Պատասխանատու /կատարող/	Համագործակցություն	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքը /ցուցիչ/	Մպատնալիքներ, ռիսկեր
1. Կրթական գործունեություն						
1 Մասնագիտության կրթական ծրագրի վերանայում	1. Մագիստրատուրայի կրթական ծրագրերի բովանդակային մասի կատարելագործում	Պ.Գևորգյան Ս. Խաչատրյան Ա.Սակարյան Ա.Հարությունյան Ս.Բեժանյան Ք.Վիրաբյան Լ.Հարոյան	Հոգեբանության ամբիոն, դեկանատ, ՌԱ կենտրոն	2015թ. սեպտեմբեր-դեկտեմբեր	Մասնագիտության կրթական ծրագրերի մշակման և ներդրման ռազմավարություն	ՎՊՀ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման պահանջները չբավարարելու մտավախություն, որը բխում է այդ գործընթացում առաջին անգամ ընդգրկվելով:
	2. Կրեդիտային համակարգի կատարելագործում և շարժունության ակտիվացում, կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի զարգացում՝ տարբեր միջազգային ծրագրերին մասնակցություն:	Պ.Գևորգյան Ս. Խաչատրյան Ա.Սակարյան Ա.Հարությունյան Ս.Բեժանյան Ք.Վիրաբյան Լ.Հարոյան	դեկանատ, ՌԱ կենտրոն	2015 – 2016թթ.	Կանոնակարգ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների	Համալսարանի մանկավարժության ամբիոնի վարկանիշի բարձրացմանը խանգարող գործոններ/ դասախոսների շարժունության բացակայություն, ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառման սահմանափակություն/

					ստուգման, գնահատման ու հաշվառման /29.04.2011/	
	3Գնահատման համակարգի կատարելագործում	ամբիոն	ՈԱ կենտրոն	2015 – 2016թթ.	Ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ /30 մարտի 2015 թ./	Գնահատման նոր համակարգի ներդրման հակադրություն/միասնական մոտեցման բացակայություն/

2.Սոցիալ-դաստրարակչական աշխատանքներ

Հայրենասիրության, մարդասիրության, մարդ-քաղաքացու որակների դաստիարակումը	1.բարոյական և գեղագիտական դաստիարակություն	Պ.Գևորգյան Ս. Խաչատրյան Ա.Սարգսյան Ա.Մակարյան Ավագ խորհրդատուներ	Ռազմահայրենասիրական դաստիարակության կենտրոն	2015-2018թթ	ԿԱՆՈՆԱԴՐ ՈՒԹՅՈՒՆ ՎՊՀ-ի մարզառագմահայրենասիրական դաստիարակության կենտրոնի	Ուսանողների համար կրթադաստիարակչական ռեսուրսների ոչ բավարար մակարդակ : Իրականության պահանջների և մեր տված տեսական գիտելիքների մեջ գոյություն ունեցող հակասությունը
	2.աշխատասիրության դաստիարակում	խորհրդատուներ	Մշակույթի կենտրոն			

3. Գիտահետազոտական						
1. Ապահովել գիտական բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսների կայուն աճ	1. հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում	Պ. Գևորգյան Ս. Խաչատրյան Ա. Հարությունյան Ս. Բեժանյան Լ. Հարոյան Ա. Մկրտչյան	Հոգեբանության ամբիոն	2015-2018թթ	Կանոնակարգ Գիտաժողովների անցկացման /05.05.2014/	1. Պետական ֆինանսավորման սղություն
մանկավարժության տեսության, կրթության և մանկավարժական մտքի պատմության, գործնական մանկավարժության, սոցիալական մանկավարժության ուղղություններով տարվող գիտահետազոտական ուսումնասիրությունների առաջնայնության ամրագրում	2. բակալավրիատների և մագիստրանտների ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում	Պ. Գևորգյան Ս. Խաչատրյան Ա. Հարությունյան Ս. Բեժանյան Լ. Հարոյան Ա. Մկրտչյան Ս. Խաչատրյան	Գիտահետազոտական համալիր լաբորատորիա	2015-2018թթ	Կանոնակարգ հոգեբանական խորհրդատվական կենտրոնի/04.04.2012/	Գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու պայմանների բացակայություն, համապատասխան միջոցների պակաս/լաբորատորիաներ, ծանրաբեռնվածություն, մարդկային ռեսուրսների ոչ ճիշտ տեղաբախշում
	3. երիտասարդ գիտական կադրերի աճը խթանող ծրագրերի մշակում	Պ. Գևորգյան Ա. Մկրտչյան	Գիտահետազոտական համալիր լաբորատորիա	2015-2018թթ	Կանոնակարգ Գիտական կաբինետի /04.04.2012/	Միջոցների սղություն, դրական դրդապատճառների բացակայություն
	4. ուսանողների ներգրավվածությունը գիտաժողովներին, սեմինարներին	Ավագ խորհրդատուներ	Գիտահետազոտական համալիր լաբորատորիա	2015-2018թթ	Կանոնակարգ Գիտական կաբինետի /04.04.2012/	
	5. գիտահետազոտական		Գիտահետազոտակ	2015-2018թթ	Կանոնակարգ	

	կենտրոնի ստեղծում		ան համալիր լաբորատորիա		Գիտական կաբինետի /04.04.2012/	
4.ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ						
Աջակցել ուսանողակենտրոն կրթական միջավայրի ձևավորմանը	1.Ուսանողների ընդգրկել կրթության որակի մշտադիտարկման գործընթացներում:	Պ.Գևորգյան Ք.Վիրաբյան Լ.Հարոյան Լ.Բաղդասարյան	ՈԱ կենտրոն, Ֆակուլտետային ՈԱ կենտրոնի աշխատախումբի հետ, Կրթական բարեփոխումների և կապերի բաժին	2015 – 2016թթ.	ՈԱ կենտրոնի ԿԱՆՈՆԱԿԱ ԲԳ /27.02.2015/	Դասախոսակենտրոն ուսուցման ձևավորված կարծրատիպ
	2.Ուսանողների ընդգրկել ՎՊՀ և ֆակուլտետների ԳԽ- ներում, ՈԱ մշտական հանձնաժողովներում՝ որպես ուսանողական ինքնակազմության մարմինների (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) ներկայացուցիչներ,	Պ.Գևորգյան Ս. Խաչատրյան Ա.Սակարյան Լ.Դանիելյան Ա.Հովհաննիսյան Ավագ խորհրդատուներ	Ուսանողական խորհուրդ	2015 – 2016թթ.	Ուսանողակ ան խորհրդի ԿԱՆՈՆԱԴՐ ՈՒԹՅՈՒՆ /26.04.2013/ Կանոնադրու թյուն ՈւԳԸ/30.04.2 014/ Որակի ապահովման կենտրոնի կանոնակար գ	Ուսանողների ակտիվության ցածր մակարդակ, սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերություն ների ոչ ճիշտ կառուցում, փոխներգործուն մեթոդների ոչ լիարժեք օգտագործում
5.Արտաքին կապեր և միջազգայնացում						
Միջազգային ծրագրերին համարժեք կադրերի պատրաստում և փոխանակում	1. դասախոսների և ուսանողների մասնակ- ցությունը արտասահ- մանյան բուհերում անցկացվող միջազգային	Պ.Գևորգյան Ս. Խաչատրյան Լ.Բաղդասարյան Լ.Դանիելյան	ԵՊՀ, ԵՊՄՀ	2015-2018թթ.	Կրթական բարեփոխու մների և կապերի բաժնի	Գիտահետազոտակա ն դրամաշնորհային ծրագրերից օգտվելու համար գիտափորձարարակ

	գիտագործնական գիտաժողովների և կոնֆերանսներին				/16.09.2010/	ան լաբորատորիաների և նյութատեխնիկական բազայի պայմանների սղություն
	2. համագործակցության պայմանագրերի և համաձայնագրերի կնքում արտասահ- մանյան բարձրագույն կրթական հաստատու- թյունների և կազմակեր- պությունների հետ					Օտար լեզուների վատ իմացությունը/նույնիս չիմացությունը/ և ֆինանսական միջոցների սղություն
	3. ուսանողների փոխանակման ծրագրերի մշակում					

6. Կառավարման համակարգի կատարելագործում

մարդկային ռեսուրսների մասնագիտական մակարդակի բարձրացման շարունակական ապահովում	պրոֆեսորադասախոսակ ան կազմի վերապատ- րաստում ԵՊՀ և ԵՊՄՀ- ում:	Պ.Գևորգյան Լ. Հարոյան Ա. Մկրտչյան	ԵՊՀ, ԵՊՄՀ	2015-2018թթ.	Կանոնակար գ ՎՊՀ Պրոֆեսորադ ասախոսակ ան կազմի որակավորմ ան բարձ- րացման ծրագրի կազմակերպ ման /29.06.2012	1. Հստակ չեն գործում դասախոսի գնահատման բազմաչափ մեխանիզմները 2. Ինքնակրթության , ինքնազարգացման մոտիվացիայի բացակայություն
	պարտականությունների		Փլիլիսովայության			Բաշխման

	և իրավունքների հստակ բաշխում		ամբիոն			անհավասարաչափություն
7.Կարերիայի և շրջանավարտների աջակցություն						
Շրջանավարտների հետ համատեղ հոդվածների հրատարակում, մեթոդական սեմինարների անցկացում:	Մասնագիտական որակի կատարելագործում:	Պ.Գևորգյան Ս.Խաչատրյան Լ.Բաղդասարյան Ա.Հովհաննիսյան	Կարերիայի կենտրոն Հոգեբանության ամբիոն	2015-2018թթ.	Փոփոխված մասնագիտական մակարդակը	/պրակտիկայի ժամերի սղությունը և շարունակականության բացակայություն /4-րդ կուրս, 2 անգամ/
8.Հասարկության հետ կապերի զարգացման ռազմավարություն						
հանրությանը մշտապես իրազեկել մանկավարժության ամբիոնում կազմակերպվող կրթական, գիտական և մշակութային գործընթացների մասին, մանկավարժի մասնագիտության գովազդ:	ապահովել շահառուների փոխադարձ կապը:	Ա.Հարությունյան, Ա.Մակարյան Ք.Վիրաբյան	Մշակույթի կենտրոն Կարերիայի կենտրոն	2015-2018թթ	Հրատարակված գիտաժողովի նյութեր ՎՊՀ կայք էջերը	Մանկավարժի մասնագիտության նկատմամբ ոչ համարժեք վերաբերմունքը
						Հետադարձ կապի հստակ մեխանիզմի բացակայությունը/ պատվիրատուի և գործատուի միջև/

Վ

ՎՄանկավարժության ամբիոնի վարիչ՝

Պ. ԳևորգյանՄանկավար

Վ

पच